ԲՈԼԴԵՐՆԻ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

1995 թվականի հունիսի 28-ից հուլիսի 2-ը Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքի մերձակա Բոլդերնի Բողոքական Ակադեմիայում տեղի ունեցավ խորհրդակցական հանդիպում, որի կարգախոսն էր՝ «Սովորել ապրել բազմակրոն Եվրոպայում»:

Այն խորհրդակցական հավաքը կազմակերպված էր Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կրթության բաժնի, Եվրոպայի Եկեղեցիների Համաժողովի և Բոլդերնի Բողոքական Ակադեմիայի միասնական ջանքերով, որին իրենց մասնակցությունը բերեցին 27 հոգի եվրոպական 13 երկրներից:

Մասնակիցները, որոնք ծառայում են հովվական կամ ուսուցչական ասպարեզներում, ներկայացնում էին Եվրոպայի քրիստոնեական բոլոր մեծագույն հարանվանությունները: Հավաքի նպատակն էր՝ ուղեգծեր մշակել բազմակրոն Եվրոպայի պայմաններում քրիստոնեական հավատքը սովորելու և ուսուցանելու համար:

Հավաքը շեշտեց այն հանգամանքը, որ քրիստոնյա եվրոպացիներն այսօր ստիպված են կարևորություն ընծայել այն իրողությանը, որ Եվրոպան այլևս զուտ քրիստոնեական կրոնի աշխարհամաս չէ. նա բազմաթիվ կրոնների մի աշխարհամաս է դարձել: Ուստի սովորելու և ուսուցանելու նպատակն է մարդկանց ամրապնդել իրենց սեփական ինքնության մեջ, զարգացնել ըմբռնողությունն ու հարգալից վերաբերումը մյուս կրոնական ավանդությունների հանդեպ և օգտագործել բոլոր կրոնների ներուժը՝ խաղաղության ու ներդաշնակության մեջ ապրելու ուղղությամբ:

Բազմակրոն Եվրոպայում ապրել սովորելը ներառնելու է պատմության վերարժևորումը՝ ուրիշ կրոնական ավանդությունների տեսանկյունից դիտված: Այն կարիք ունի նաև ներկայի խորունկ վերլուծության, երբ հաճախ կրոնն օգտագործվում է կրոնական համայնքների միջև տնտեսական, ընկերային ու քաղաքական անհավասարությունները թաքցնելու համար:

Այն կարիք ունի հետագա որոշակի կրթական ջանքերի, որոնք բխում են ունկնդրելու, ապահովության ստեղծման մեթոդները զարգացնելու, ինքնությունը հարաբերությունների մեջ կառուցելու և հակամարտությունները լուծելու ունակությունից:

Հավաքն իր գնահատանքն արտահայտեց դասագրքերը վերանայելու և փոխադարձ ընդունելի ծրագիր մշակելու ուղղությամբ կատարված ջանքերի նկատմամբ:

Այն առաջարկեց ուսումնասիրել կրթական գործընթացի հնարավորությունը, որը կարող է կառուցվել ինչպես խաչակրաց արշավանքների սկբնա-

վորման 900-ամյակի, այնպես էլ մահմեդականների կողմից քրիստոնյա Արևելքի նվաճման 1300-ամյակի շուրջ: Այն կարող է միաանաբար կազմակերպվել Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Խորհրդի հետ և կարող է առիթ հանդիսանալ Եվրոպայում քրիստոնյաների ու մահմեդականների հաշտության և նոր ու ստեղծագործ հարաբերությունների հաստատման համար:

Հավաքի մասնակիցներն ընդունվեցին Ցյուրիխի Բարեկարգյալ Եկեղեցու Սինոդի կողմից, որը շեշտեց ներդաշնակ համակեցության բացարձակ անհրաժեշտությունը մի քաղաքում, որտեղ մահմեդականությունն այսօր դարձել է երրորդ մեծագույն կրոնական հարանվանությունը Բողոքական և Կաթոլիկ Եկեղեցիներից հետո:

Մասնակիցներն այցելեցին նաև մահմեդական բոսնիացիների համայնք, ինչպես նաև Հրեական ուսումնական կենտրոն, որն ստեղծվել է քրիստոնյաներին հրեական կյանքին ու ավանդություններին ծանոթացնելու նպատակով:

Սույն հավաքին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մասնակցում էր Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, որը հավաքի անցկացման օրերին նախագահեց Ուղղափառ Եկեղեցիների միասնական պաշտամունքին, ինչպես նաև կիրակնօրյա ընդհանրական եզրափակիչ աղոթքին, որի ընթացքում հանդես եկավ անգլերեն քարոզով՝ ուղղված հավաքի մասնակիցներին:

Մ. Ծ. Վ. Ա.